

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՊՈԼԻՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ  
ԿԱՊԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ**



**Հ Ր Ա Հ Ա Ն Գ**

**«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՊՈԼԻՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ»  
ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿԱՊԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ  
ՏՆՏԵՍԱՎԱՐՄԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԲԱԺՆԻ ՊԵՏԻ, ՊԱՐԵՏԻ,  
ՓԱԿԱՆԱԳՈՐԾ-ՍԱՆՏԵԽՆԻԿԻ, ԷԼԵԿՏՐԻԿԻ ՀԻՄՆԱԿԱՆ  
ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

Հաստատված է

«Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան»  
հիմնադրամի Կապանի մասնաճյուղի գիտական խորհրդի  
հարցման կարգով անցկացված 2017 թվականի հունիսի 9-ի  
նիստի թիվ 011/02 որոշմամբ

## **Հ Ր Ա Հ Ա Ն Գ**

«Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան»  
հիմնադրամի Կապանի մասնաճյուղի  
Տնտեսավարման և սպասարկման բաժնի պետի, պարետի,  
փականագործ-սանտեխնիկի, էլեկտրիկի հիմնական  
գործառույթների վերաբերյալ

## 1. Տնտեսավարման և սպասարկման բաժնի պետ

- Իրականացնում է բաժնի աշխատանքների անմիջական ղեկավարումը:
- Կազմակերպում, ղեկավարում և վերահսկում է բաժնի ընթացիկ գործունեությունը:
- Պատասխանատվություն է կրում բաժնի առջև դրված խնդիրների և գործառույթների իրականացման համար:
- Իր լիազորությունների շրջանակներում բաժնի աշխատակիցներին տալիս է համապատասխան ցուցումներ և հանձնարարականներ:
- Վերահսկում է բաժնի աշխատակիցների կողմից աշխատանքային կարգապահության ու մասնաճյուղի ներքին կարգապահության կանոնների պահպանումը:
- Բաժնի լիազորությունների շրջանակներում նախապատրաստում է առաջարկություններ, հաշվետվություններ, զեկուցագրեր և այլ գրություններ:
- Ստորագրում է բաժնի կողմից պատրաստվող փաստաթղթերը:
- Սահմանում է բաժնի աշխատակիցների միջև աշխատանքների բաշխումը՝ համաձայն նրանց վերապահված գործառույթների:
- Մասնակցում է մասնաճյուղի ստորաբաժանումներին անհրաժեշտ գույքով ու տնտեսական պարագաներով ապահովման, մասնաշենքերի վերանորոգման կազմակերպման ու վերահսկման աշխատանքներին:
- Կազմակերպում է մասնաճյուղի շենքերի ու շինությունների՝ տնտեսական սպասարկման, սանիտարահիգիենիկ և հակահրդեհային պաշտպանության նորմերին ու կանոններին համապատասխանության ապահովման աշխատանքները և վերահսկում մասնաճյուղի տարածքի սանիտարական վիճակը:
- Հսկում է լուսավորման, ջեռուցման, օդափոխության և այլ սարքավորումների սարքին և պահպանված վիճակում գտնվելը:
- Ղեկավարում է մասնաճյուղի տարածքի բարեկարգման, կանաչապատման, մաքրման և տոնական օրերի միջոցառումներին գեղարվեստական ձևավորման աշխատանքները:
- Կազմակերպում է թղթի և այլ թափոնների ժամանակին տեղափոխումը:
- Իր ֆունկցիոնալ պարտականություններին շրջանակներում ապահովում է մասնաճյուղի աշխատակիցներին գրենական պիտույքներով, տնտեսական-կենցաղային և գրասենյակային տեխնիկայի համար անհրաժեշտ նյութերով, տնտեսական պարագաներով, արտահագուստով, գործիքներով:
- Անձամբ պահպանում է աշխատանքային և արտադրական կարգապահության, աշխատանքի պաշտպանության նորմերն ու կանոնները, արտադրական սանիտարիայի և հիգիենայի պահանջները, հակահրդեհային պաշտպանության ու քաղապաշտպանության պահանջները և իրականացում աշխատողների կողմից պահպանման վերահսկողությունը:
- Իր աշխատանքային ոլորտում առկա թերացումների և դրանց վերացման ուղղությամբ ձեռնարկվող միջոցառումների վերաբերյալ ժամանակին իրազեկում անմիջական ղեկավարությանը:

## 2. Պարեա

- Ղեկավարում է մասնաշենքերի և դրանց հետ փոխկապակցված կառույցների ու շրջակա տարածքի պահպանման աշխատանքները:
- Կազմակերպում է մասնաշենքերում մաքրման աշխատանքները և հսկում մաքրության պահպանումը:
- Կազմակերպում է մասնաշենքերի նախապատրաստումն աշնանային-ձմեռային շահագործման:
- Կազմակերպում է դռների, պատուհանների, շերտավարագույրների, վարագույրների, կողպեքների, փականների, գույքի և այլնի ժամանակին վերանորոգումը:
- Ապահովում է իր պատասխանատվության ներքո գտնվող գույքի սարքին և պահպանված վիճակում գտնվելը:
- Հաշվառում է գույքի առկայությունը, կազմում առկա գույքի վիճակի պարբերական ստուգումների և դուրս գրման ակտերը:
- Մասնաճյուղի պահեստից ստանում է տնտեսական սպասարկման պարագաները և նյութերը, տրամադրում դրանք օժանդակ բանվորներին ու հավաքարարներին, իրականացնում է պարագաների օպերատիվ հաշվառումը և վերահսկում տնտեսական նպատակներով տրամադրված նյութերի և միջոցների ռացիոնալ օգտագործումը:
- Վերահսկում է մասնաճյուղում սանիտարական պահանջների և հակահրդեհային անվտանգության կանոնների կատարումը:
- Վարում է սանիտարական և հակահրդեհային վերահսկողության գրառումների գիրքը:
- Ապահովում է մասնաշենքերի և դրանց հետ փոխկապակցված կառույցների ու շրջակա տարածքի հակահրդեհային անվտանգության միջոցառումների իրականացումը և հակահրդեհային պարագաների սարքին վիճակում պահպանումը:
- Ձեռնարկում է կենցաղային միջատներից, կրծողներից և այլնից մասնաշենքերի ու շինությունների ժամանակին վերամշակման միջոցառումները:
- Իր ֆունկցիոնալ պարտականություններին շրջանակներում ապահովում է մասնաճյուղի գույքի և այլ ակտիվների պահպանումը ու կազմակերպում դրանց պահեստավորումը, հաշվառում է գույքը և այլ ակտիվներն ու կազմում դրանց վիճակի և պահպանվածության վերաբերյալ հաշվետվություններ:
- Կազմակերպում է փոքրարժեք և արագամաշ առարկաների գույքագրումն ու դուրս գրումը:
- Հսկում է մասնաճյուղի բոլոր տնտեսական սենյակների (շինությունների) ժամանակին փակումը:
- Անձամբ պահպանում է աշխատանքային և արտադրական կարգապահության, աշխատանքի պաշտպանության նորմերն ու կանոնները, արտադրական սանիտարիայի և հիգիենայի պահանջները, հակահրդեհային պաշտպանության ու քաղաքաշտպանության պահանջները և իրականացում աշխատողների կողմից պահպանման վերահսկողությունը:
- Իր աշխատանքային ոլորտում առկա թերացումների և դրանց վերացման ուղղությամբ ձեռնարկվող միջոցառումների վերաբերյալ ժամանակին իրազեկում անմիջական ղեկավարությանը:

### **3. Փականագործ-սանտեխնիկ**

- Ապահովում է շենքերի ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի հուսալի աշխատանքը, բացահայտում և վերացնում է համակարգի աշխատանքի թերությունները:
- Տեղակայում է սանիտարատեխնիկական սարքավորումները, կատարում խողովակների միացումներ:
- Սանիտարատեխնիկական աշխատանքներում սարքավորումները և գործիքները կիրառում է ըստ նշանակության ու ըստ պայմանների ընտրում նյութերը:
- Ստուգում և փորձարկում է սանիտարատեխնիկական համակարգի աշխատանքը:
- Կարգավորում է սանիտարատեխնիկական համակարգի սարքավորումների աշխատանքը:
- Ապահովում է սանիտարատեխնիկական համակարգի անվտանգ աշխատանքը:
- Տրամադրում է խորհրդատվություն սանիտարատեխնիկական համակարգը օգտագործողներին:
- Աշխատանքի ընթացքում պահպանում է աշխատանքային և արտադրական կարգապահության, աշխատանքի պաշտպանության նորմերն ու կանոնները, արտադրական սանիտարիայի և հիգիենայի պահանջները, հակահրդեհային պաշտպանության ու քաղպաշտպանության պահանջները, բնապահպանական նորմերը:

### **4. Էլեկտրիկ**

- Աշխատանքին համապատասխան նախապատրաստում է անհրաժեշտ նյութերը, գործիքները, սարքավորումները և հարմարանքները:
- Տեղակայում և մոնտաժում է էլեկտրական սարքավորումներ, էլեկտրական լուսավորության սարքեր ու էլեկտրական վահանակներ:
- Իրականացնում է էլեկտրական սարքերն ու սարքավորումները սնող հաղորդագծերի և մալուխային ցանցերի անցկացման աշխատանքներ:
- Բացահայտում է էլեկտրական սարքավորումների անսարքությունների և թերությունների պատճառները:
- Վերանորոգում է էլեկտրական սարքավորումների դետալները և հանգույցները՝ պահպանելով սահմանված տեխնոլոգիան:
- Վերացնում է անսարքությունները, որոնք կարող են հետագայում բերել վթարային իրավիճակի կամ էլեկտրամատակարարման խափանման:
- Ստուգում և փորձարկում է վերանորոգված սարքավորումների աշխատանքը:
- Էլեկտրական սարքավորումների վերանորոգման և շահագործման ժամանակ ապահովում է աշխատանքի կազմակերպման ժամանակակից եղանակները:
- Համապատասխան էլեկտրական սխեմաներում կատարում է էլեկտրական սարքավորումների կարգաբերման աշխատանքներ:
- Շահագործողներին հրահանգավորում է նոր մոնտաժված, վերանորոգված, կարգաբերված էլեկտրական սարքավորման շահագործման պայմանների մասին:
- Էլեկտրական սարքավորումները շահագործողներին տրամադրում է անհրաժեշտ խորհրդատվություն:

### **5. ԵՋՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ**

5.1. Սույն հրահանգը հաստատվում, փոփոխվում կամ լրացվում է գիտական խորհրդի որոշմամբ և կիրարկվում է մասնաճյուղի տնօրենի հրամանով: